Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2022 թվականի օգոստոսի 9-ից 12-ը

Բելառուսի Հանրապետություն (ք. Մինսկ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

- Վահան Զարխիֆալակյան
- Գրիգորի Դավթյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) Հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության պետ
- ՀՀ ՊԵԿ Միջազգային համագործակցության վարչության հարկային համագործակցվության բաժնի գլխավոր հարկային տեսուչ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելառուսի Հանրապետություն, ք.Մինսկ, օգոստոսի 9-ից 12-ը

4. Հրավիրող կողմը՝

Բելառուսի Հանրապետության պետական հսկողության կոմիտեի ֆինանսական հետաքննության դեպարտամենտ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել ԱՊՀ անդամ պետությունների Հարկային (ֆինանսական) հետաքննության մարմինների համակարգող խորհրդի (ՀՀՄՀԽ) հերթական 21-րդ նիստին, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քննարկմանը, նիստի ընթացքում նախատեսվող քվեարկություններին, ինչպես նաև ՀՀՄՀԽ նիստի նախօրեին կազմակերպվող փորձագետների նիստին:

6. Քննարկված թեմաները՝

Ս/թ օգոստոսի 11-ին կայացած ԱՊՀ անդամ պետությունների Հարկային (ֆինանսական) հետաքննության մարմինների համակարգող խորհրդի (ՀՀՄՀԽ) հերթական 21-րդ նիստի ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, այդ թվում.

- ՀՀՄՀԽ-ի 2022թ. աշխատանքների ծրագրի կատարման ընթացքը և 2023թ. գործունեության ծրագրի նախագիծը.

- 2019-2023թթ. հանցավորության դեմ պայքարի համատեղ միջոցառումների ԱՊՀ միջպետական ծրագրով նախատեսված միջոցառումների, ինչպես նաև ՀՀՄՀԽ նախորդ նիստերին ընդունված որոշումների կատարման ընթացքը.

- Պետության տնտեսական անվտանգության ապահովման ուղղությամբ ԱՊՀ հարկային (ֆինանսական) հետաքննության մարմինների կողմից իրականացրած գործունեությունը, այդ թվում՝ 03.06.2005թ. «Հարկային հանցագործությունների դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրի իրագործումը, տնտեսական հանցագործությունների և իրավախախտումների նոր սխեմաների բացահայտման փորձի փոխանակության ընթացքը.

- Ծայրահեղականության, այդ թվում՝ ահաբեկչության, ֆինանսավորման դեմ պայքարում ձեռնարկած միջոցառումները, մասնավորապես՝ 2020-2022թթ. ահաբեկչության և ծայրահեղականության այլ բռնի դրսևորումների դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության ծրագրի շրջանակներում ձեռնարկված միջոցառումները, զանգվածային անկարգությունների և հասարակական կարգը կոպտորեն խախտող խմբային գործողությունների կազմակերպման, ահաբեկչական կամ ծայրահեղական գործունեության ֆինանսավորման և այլ նյութական ապահովման խողովակների խափանման միջոցառումները .

- ԱՊՀ երկրներում համացանցի և վճարման թվային միջոցների (կրիպտոարժույթ, էլեկտրոնային դրամ և այլն) օգտագործմամբ իրականացվող տնտեսական և կոռուպցիոն հանցագործություններին հակազդելու պրակտիկան.

- ՀՀՄՀԽ-ի դրամական միջոցների ապօրինի շրջանառությանը և ապօրինի խաղային բիզնեսին հակազդման գծով փորձագետների աշխատանքային խմբի

գործունեությունը.

- ԱՊՀ մասնակից պետությունների հարկային (ֆինանսական) հետաքննության մարմինների անձնակազմի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման հարցերը.

- ՀՀՄՀԽ-ի նախագահության, կազմի, նախագահի, քարտուղարի, խորհրդի անդամների, ներկայացուցիչների, հաջորդ տարիների նիստերի անցկացման վայրի, այլ կազմակերպական հարցեր:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումներ են տեղի ունեցել Բելառուսի Հանրապետության, Ռուսաստան Դաշնության, Ղազախստանի Հանրապետության, Ուզբեկստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության ֆինանսական հետաքննության մարմինների պատվիրակությունների ղեկավարների հետ, քննարկվել են երկկողմանի հետաքրքրություն առաջացնող հարցեր:

Նիստերի ընթացքում ՀՀ պատվիրակության անդամները հանդես են եկել ելույթներով, ներկայացնելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության 2019-2021թթ. գործունեության արդյունքները, ինչպես նաև քննարկվող հարցերի վերաբերյալ առկա առաջարկություններն ու դիտողությունները:

Նիստի ժամանակահատվածում ՀՀ պատվիրակությունը մասնակցել է նաև Բելառուսի Հանրապետության ֆինանսական հետաքննության մարմնի հիմնադրման 30-ամյակին նվիրված տոնակատարություններին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ՀՀՄՀԽ-ի 21-րդ նիստի ընթացքում՝ խորհրդի նախագահությունն անցել է Բելառուսի Հանրապետության պետական հսկողության կոմիտեի ֆինանսական հետաքննության դեպարտամենտի ղեկավարին, իսկ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության պետը դարձել է Խորհրդի համանախագահ: Որոշվել է, որ 2023թ. նախատեսվող ՀՀՄՀԽ հերթական

նիստն անցկացվելու է Հայաստանում և Խորհրդի նախագահությունն անցնելու է ՀՀ ՊԵԿ-ին:

ՀՀՄՀԽ-ի 21-րդ նիստի արդյունքներով ստորագրվել է նիստի արձանագրությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հաշվի առնելով, որ ՀՀՄՀԽ-ի 2023թ. հերթական նիստը անցնելու է Հայաստանում, որի ընթացքում Խորհրդի նախագահությունն ու խորհրդի քարտուղարության գործառույթներն անցնելու են ՀՀ ՊԵԿ-ին, անհրաժեշտ է իրականացնել համապատասխան նախապատրաստական և կազմակերպական աշխատանքներ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

15.08.2022թ.